

Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

ԱՐՁԱԳԱՆԳ ԵՐԻՈՒՈՒՅԻ ԼՈՒՍԱԲՈՐՈՐԱԹԵԱՆ.

Ա. Տարի, Թիւ, 343. Հաստատուի լեզուը երկու, տեղում, հաւելանը հայկ մեռնէ : Կարձակայե. Բաղից, Արգայ Գնաքիւղեան, 23, rue de Pleurus. 1859 Օգոստոս 15.
— Պօղիս, — Իզմիր, Արգայ Արիքաւեան. — Եփեսոս, Արգայ Տէր Գեորգիւսեան Եղբաւ :

Երբ Իզմիրի տնակաւորը տեսաւ, Արեւմտեայ տնակաւորներէն հրաման ինկարէր էր, Պարոն Տըլէզի բերնով, բաղաւորան մանր յարեր տալու և սրտաւորան գրաւածները, սրբ պիտանուծիւն մ'ունին, Թարգմաներու :

Հաշտութեան հետ կը գտայի մեզ շնորհաւոր տնակաւորներ, և չ'ենք ուզեր բնութիւն որ մեր վրայ ձգուի այն : Ուրիշ նպատակով այս Թերմը շարագներու յանձն առինք, և պատերազմին տնակաւորացի շիտեր ու ռազմական շատայիւնք միայն տնակաւորին գմեզ մալարաւորքիս որակիքներու տրամադանգ բլլիլ և մեր ընկերացիներու աշտոյրութիւնը պէտք ի Իզմիր տանիլ : Հայիս Թէ մէկ երկու հոգի նստեցան Թէ ինչ բնիկ ուղեցիներ և ինչ բնիկ : Հայ մողախալիքն միմալի չ'էր ներդր որ բնականաւոր բաղաւորանութեան վրայ գլխիք, և մեր արտաւորութիւնը կ'առիւր որ Թարգմաներ և ոչ Թէ մեկ նստեցան տանք դէպքերուն : Ամէ երբեմն երկու Թարգմանութեան մէջ տեղը ազատաւորք տնակաւորութիւն մը սպարեցաւ կամ Աստուծոյ դէմ տառակ բռնելու տեսնուեցան, պատճառը մեր տնակաւորի նախնաւորութեան պէտք է որ տրուի : Ինչպէս այս, նստաւորքս ուրիշ պարագայի մէջ, Հայերը պիտի պատն զմեզ քառեղեմ և ոչ միտին : Ձեր գանգալիք : Հայք ինչ բնիկին չ'են գիտեր տակաւին, և տղիս ու կրօնական ժողովուրդէ մը ուրիշ դատում տրանել տրայութիւն է :

Կը դատանք ուրեմն պէտք ի գրական լի խնդիրները : Կը շարունակենք Ապէ Բրէժօ հեղինակին վէպը և կը յաւանք որ Թրանտիս գործութեան ուրիշ հեղինակներու վրայ ծանօթութիւններ պիտի կրնանք տալ մինչև տարայս վերջը, որ կը գտայի մեր խոտորակը նստաւորութեան և բանիլ մը Հայերու տղի :

Երբեք վերջին յաշտութեան Իզմիրի տնակաւորներ կը դնենք նա լեւոնտա Վայսեր ճառը որոտմէն մէկ տողերը երկու յարաւոր արժէք ունին : Պատերազմին վերջը միշտ հաշտութեան Թէտնիւն չ'է : Մարդ փռու մը տնկեցաւ ժամանակ հետ հետ կ'երթայ որ տակի տնակ տան : Ազգերն ու երբեմն արտաւոր կը վարտին : Բիւզ կ'ուզէր, տակի յատն տալիս տառք, որ Անգլիա բնիկի տակի լու տառքս նստար : Կարելի է որ Եւրոպեան Դ Քիլիկի կարծիքը ի դարձ դնել ուզէ այստ : Ս. Ս.

Վ. Կայսրը տնակաւ 19ին ընդունեց, Ո՛հ Գլուխ պատին մէջ, Տէրութեան ժողովներու անդամները որք շնորհաւորելու համար եկեր Լին հան : Մերակցութիւն նախագահը, Պարոն Քրօյն, Սրենագիր ժողովին նախագահը, Պարոն Կոն ուր Մարմնի, Տէրութեան խորհուրդին նախագահը, Պարոն Պարոշ, ժամանակ հատեր ըսին ու հաշտութեան և պատերազմի զոհեցին : Վ. Կայսրը այս երկու նիւթին վրայ իր միտքը յարունեց այսպէս.

Պարոններ,

Նորէն գտնելով զիս ձեր մէջ, զուր որ հեռա-
կայութեանս ատեն Վաչարունին և որդիս այնքան
նուիրումով պատեալ պահեցիք, կ'զգամ հարկաւո-
րութիւնը նախ ձեզմէ շնորհակալ ըլլելու, ետքը
ձեզ մեկնելու վարմունքիս շարժառիթը :

Երկու ամիս յաջող արշաւանքէ ետեւ, երբ Ֆրան-
սաի և Սարտենիաի բանակները Վերսօնի պա-
տուարներու ներքեւ հասան, անխուսելի էր որ
կռիւր ջիւղիտէր ընդհուպ թէ ռազմական և թէ բա-
ղաբանական նկատումով : Իհարկէ ստիպուած էի
երեսէն յարձակիլ թշնամիին վրայ որ մեծ բերդե-
րու մէջ ապստինած էր և որուն կուշտերը անհպելի
էին բոլորովը եղած չէզոք երկիրներու պատճա-
ռով : Ասիկէ զատ պաշարումի երկար ու ամուլ կռիւր
սկսելով կը գտնուէի դէմ առ դէմ Սերուպի որ
սպառնալէն և սրտորստ կ'ապասէր թէ յաղթու-
թեան հետեանքը մեզ չթողուլ և թէ ձախարդութեան
տաղնապը աւելի ծանրակիր ընել :

Այսու ամենայնիս ձեռնարկութեան դժուարու-
թիւնը ոչ իմ որոշումս կը սատանէր և ոչ բանակիս
սաւառնումը կը դադրեցրնէր, և թէ ի գործ զրուելի
միջոցները գերագոյն չ'երեւէին ակնունելի հետեան-
քէն որ անկէ պիտի ծագէր : Պէտք էր համարձա-
կօրէն չէզոք երկիրներու արձելը ոտքի տակ առ-
նուլ և Բէնի, ինչպէս Ատիթի վրայ, պատերազմ
ընդունիլ : Պէտք էր ամէն տեղ Ապստամբութեան
զօրութիւնով կազմուիլ : Պէտք էր տակաւին ծան-
րագնի արիւն մը թափել որ արդէն կնքի հոսեր էր :
Մէկ խօսքով, յաղթելու համար պէտք էր վտանգի
մէջ դնել այն ամենը զոր թագակիրի մը ներելի չ'է
ընել եթէ ոչ իր երկրին անկախութեան համար :

Եթէ կանգ առի պատճառը այն չ'է ուրեմն որ
յոգնութիւն կամ նուազում մը վրաս եկաւ և կամ
լքում մը կ'զգամ այն ազնիւ իրաւունքին համար
զոր կ'ուզէի պաշտպանել. ոչ, միայն՝ սրտիս մէջ
աւելի ազդու կերպով կը յուզուէր Ֆրանսաի շահը :

Միթէ կը կարծէք որ ես ալ սրտաբեկ չ'էի երբ

հարկ եղաւ սանձ դնել իմ զինուորներու եռանդին
որք, յաղթութիւնէն բոլրեքած, յառաջ բալել կ'ու-
զէին արտապինդ :

Միթէ կը կարծէք որ կամաւ և ուրախութեամբ
Սերուպին առջև ու ականերեւ, պատերազմին օրը
գրածիս մէկ մասը ետ առի և Մէնսիօն մինչև
Ադրիական ծովը Աւստրիային կը թողում :

Միթէ կը կարծէք որ անտրտում և անզգայ աչով
կը տեսնեմ թէ առաքինի սիրտերու ազնիւ, երկնա-
ծաւ փախազները հիմն ի վեր կ'աւերին և հայրենա-
սիրական յոյսերը կը թռին հետաւորոյս :

Եթէ կը կարծէք զայս, կը սխալիք :

Իդալիսի անկախութեան ծառայելու համար պա-
տերազմ ըրի Սերուպի կամքին դէմ. երբ իմ եր-
կրիս ներկայ և ապագայ բախտը վտանգի մէջ տե-
սայ, հաշտութիւն ըրի :

Չ'երևակայէ սակայն մէկը թէ մեր ջանքերը և
զոհերը ի դերեւ երան բոլորովին :

Ինչպէս որ ըսի զինուորներս ողջունելու ատեն,
իրաւունք ունինք պարծելու մեր ըրած սակաւօրեայ
պատերազմին վրայ : Չորս կռիւի և երկու պատե-
րազմի մէջ յաղթեցինք բազմաթիւ բանակի մը որ
կազմով և քաջութիւնով ուրիշ բանակէ վար չմնար :

Բիէմօնի մագաւորը, որ ժամանակաւ Արլեան
լեռերու պահպան կը կոչուէր, տեսաւ իր երկրին
ազատութիւնը թշնամիներէն և սահմանին տարա-
ծութիւնը Թէսէնի եզրէ մինչև Մէնսիօի եզրը : Իդա-
լիսի ազգութեան տեսիլը հիմա ընդունելի է նաեւ
այն մարդերէ որք ամենէն աւելի անոր թշնամի էին :
Ի վերջէ Իդալիսի իշխանները կը հասկնան անհրա-
ժեշտ կարեւորութիւնը փրկաւետ նորոգումներու :

Այսպէս, Ֆրանսաի ռազմական զօրութեան նոր
փաստ մը ևս տալէն ետեւ, հաշտութիւնը, զոր ըրի,
պիտի արդիւնաւորէ բարօրութեան հետեանքները :
Ապագայն օրէ օր աւելի լաւ պիտի յայտնէ զանոնք,
Իդալիսի երանութեան, Ֆրանսաի ազդումին և Սե-
րուպի հանգստութեան համար :

Դժուար է Պարոն Աւետիք, շատ դժուար, հասարակածեան տաք և վառ ամորսագրութիւն մը ուրանալ, և Խալիւսերու ահամբոյն մէջ եղած խօսքը այնպիսի ստորին շշուէ մ'է որ երբէք հրապարակի վրայ առաքինի մարդու մը ուշը չգրաւէր: Պ. Պետրոս Խորասանճեանին ստորագրութիւնը կըսէ մեզ յայտնի և մեկին. « Կը յաւիտ մահաւանդ որ Ձեր Ազնուութիւնը, ինչպէս կը հաւատամ, (հաւատամքը սիրենք) ինծի համար ալ բարեկամական զգայմունքներ ունեցած ժամանակը, տեղի լաւ համարեր է հրապարակական միջոցներու ձեռք դարձել փոխանակ անգամ մը մտերմաբար (քննել) ինձ գրելու բարեկամութիւն ունենալու, որով իմ անձնական պատիւս ալ անխնայ մնացեր է առ ԱՆԱՐԺԱՆ ՎԱՐԳԱՊԵՏԻՆ ՊԱՇՏՊԱՆ կարծուելու գծադրութիւնն ունենալով: »

Պարոն Աւետիքը կ'ընէ հայերէն գիտէ, պիտի հասկընայ որ այս անտրամայի տողերը զոգոմէն աւելի նշանակութիւն ունին, և մեզ իրատեսի կատային որ զանոնք յիշենք նկատելի ու վատ յարձակումի մը դէմ:

Պարոն Աւետիքը պիտի զգայ, (եթէ տակաւին նկատունի զգայու) որ ճշմարտութեան սահմանէ չ'էլինք էլեր բնաւ, և մեզի ստախոս ըսող մարդը երեսի ջուրը բոյրովին կորուսեր է հիմա: Պիտի զգայ որ տրիշին « խայտառակ » ըսողները, անթիւ պահապանութիւններէ զատ, ստուծեան զրոյն ալ կը կրեն իրենց հակառի վրայ: Եւ որպէս զի զգալն և հասկնալն ետե լաւ մը համագութի, իր տաք և կը գնենք Պ. Պետրոս Խորասանճեանին խօսքերուն վերջը. « Ներեցէք, մեծարգոյ Պարոն, կ'ըսէ անիկա մեզ, ըրած զանգատէս և ձեր վրայ անեցած խորին համարաման վրայ (1) վստահ ըլլալով, հաճեցէք ուրիշ ծանրագոյն միջոցներու ձեռք չ'զարնելու, որոնցմէ ազգին պատուոյն նախադրանայ աւելի մեծնալը ձեր ԱԶԳԱՍԷՐ սրտին ալ մեծ ցաւ պատճառելուն տարակոյս չ'ունիմ: »

Պարոն Աւետիքը կը տեսնէ որ քանի մը տարի առաջ ազգասէր կը քարոզուէինք նոյն մարդէն որ հիմա կը յանդգնի, կարգէ զուրս ամարդութեամբ, զմեզ բամբասել և « խայտառակ » անուանել: Այս է տհա Խալիւսերու ընկերութեան պատուը, այս է նաև պատիւ իր թեմեակեան որ զինքը խախտի պէս հողմակոծ կը տանի զէվէկներէն գէտ ի մայր վարդապետներ, և վարդապետներէն գէտ ի մոլի գէվէկներ:

Պարոն Աւետիքը իր թշնամանքով չ'զոհանար և ազգ կ'առնէ մեզ թէ Մասիս լրագրիւրը մեր ինչ տեսակ մարդ ըլլալը բաւական հասկցոյց և մեր ստանալ ալ պիտի իմացնենք հասարակութեան թէ որ չ'զոգոջանար յիշեալ

ամիրային (քննել) անունը մեր անունին հետ գնելէն: Այս զոգոջութիւնը զովեալի արժանի է Մասիսի պէս « խայտառակ թերթի » մը կողմէ, վստահ զի մենք ալ այստեսեալ ճշմարիտ անպատուութիւն կը համարինք եթէ երբէք Պ. Պետրոս Խորասանճեանի մը անունին քով մեր անունը տեսնենք: Պարոն Աւետիքը կրնայ հաւատարի ըլլալ որ ամէն զոգոջութիւն պիտի ընենք որ իրմէ հեռու գտնուինք: վստահ զի մարդ իր ընկերէն կը յայտնուի, կ'ըսեն, և Պ. Պետրոս Խորասանճեանը յայտնուեցաւ Խալիւսի մը « խայտառակութենէն »: Երանի թէ Պարոն Պետրոս Խորասանճեանը ինքը այս զոգոջութիւնը քիչ մը առաջ ի զարմ գնէր, զէպ ի մեզ չ'զար « անարժան վարդապետի մը պաշտպան կարծուելու գծադրութիւնը » մեզ չ'յայտնէր և մեր երկայնմտութիւնը չ'մտարար: Եկու տէ վեհանձնութեան սղորմութիւն ըրէ այս տեսակ մարդերու... և ետքը Պարոն Աւետիքէ մը նախատնէ:

Վերջապէս Պարոն Աւետիքը կը գրէ թէ Պ. Պետրոս Խորասանճեանը զմեզ կ'արհամարհէ: Այս ազատութիւնը իրեն կը շնորհուի նոյն իսկ մեր արհամարհութեան զգայութիւնէն զոր իր վրայ յայտնէր էինք քանի մը շարժած յառաջ: Առամն ընդ առաման, տին ընդ տկոն, արհամարհութիւն ընդ արհամարհութեան: Մասիս մարգարէին բերնէ կ'ըսէ ճշմարտութիւն մ'է այս, և գոհ ենք որ Պ. Պետրոս Խորասանճեանը սովորէր է զայն: Պ. Պետրոս Խորասանճեանը յանձնարարի կը բամբասուի ուրեմն իրբն տգէտ իր լեզուին: Սուրբ զիրքը ընթերցողը պէտք է որ հայերէն գիտնայ և քերականութիւն սովորած ըլլայ « խայտառակեմ » բայը խոնարհելով:

Պարոն Աւետիքը չ'գիտէր կամ չ'գիտէր կը դարձէ որ իր ավիրան մեզ տրիշ նամակներ ալ գրած սեն իր տաքի խնդրքը մեզ կրկնելով և աղաչելով որ մեծապատիւ Յովսէփ Զելեպլին Բարիկ վերադառնալուն սպասենք և մեր բողոքին շարունակութիւնը կամ փոխտը չ'հրատարակենք ի սէր ազգին: Մեր այն ժամանակի խոհեմութիւնը հիմա կը սեպուի... « խայտառակութիւն »: Հայրենասէրներուն կը թողունք պատիւ իրբն ընթացքի մը արժէքը...

Մեծապատիւ Յովսէփ Զելեպլին Բարիկ եկաւ իր ընտանիքով և առանձին ու մտերիմ տեսութեան մը մէջ, զոր ինքը խնդրէր էր մեզմէ, աղաչեց որ Պ. Պետրոս Խորասանճեանին փոփոգը կատարենք հաստատելով մեզ որ յանցաւորը իր բարոյական պատիւը պիտի ընդունի և « խայտառակութեան » արմատը պիտի խլի ի սպաս:

Մենք որ անձնական թշնամութիւն մը չ'ունէինք մեկու մը դէմ և ազգին պատիւը պաշտպանելու համար միայն զիրիչ տներ էին, զիջանք յոժարակամ մեր մեծապատիւ քաղաքակցի աղէքսին, և լսենք ինքն

(1) Que les temps sont changés!

այսօր : Այս լուսնին ալ աւելի ըրինք ներելով « խայտառակութեան » : Եւ հիմա Պ. Պետրոս Խորասանճեանը կը համարձակի ուրիշի բերնով « խառնառակ » բառը մեր վրայ բեռնաւորել՝ մենք որ « խայտառակութեան » ղէմ բողոքներ էինք երբ ինքը զայն « պաշտպանելու զժաղդութիւն ունէր » ինպէս ինքն ալ կը հաւանի իր համակրին մէջ : Արդարեւ այսպիսի յանգցումովն մը տմէն չափէ դուրս կ'երնէ և կ'ստիպէ զմեզ որ համեմատութիւն մտնանք, քոյը խղճեք և հասարակութեան ատենանին տուչ ցոյցներ ուժգնակի : « Մեր կեանքին մէջ զրուածներէն ոչ տառ մը, ոչ կէտ մը և ոչ շեշտ մը կ'ուրանանք. ինչ որ ըսինք, զրեցինք և հրատարակեցինք, նորէն ըսելու, զրելու և հրատարակելու պատրաստ ենք եթէ նոյն գէպքերը պատահին » : (1) Թող մեր ծշնամիները երեւին հասարակութեան առջև. Թող Պ. Կ. Շահնազարեանը, Պ. Յ. Կրճիկեանը, Պ. Գ. Այվազովսին, Պ. Ամբրոսիոսը և իրենց համաները հրապարակ գտն և բնենք մէյ մը նայինք թէ սրկէ կը ծագի այն « խայտառակութիւն » որ Պ. Պետրոս Խորասանճեանի կողմերէն մեղ կ'ուղարկուի : Ո՛ր կրօնաւոր և կրօնամոլ ծշնամիք եթէ այսքան առաքինի էք ինչո՞ւ ծակամուտ կը պահուիք, ինչո՞ւ հասարակութեան դատաստանէն կը վախճաք, ինչո՞ւ ձեր վաստը զլուխնիդ մէջ կը ծաղէք : Երբ առաքինութիւնը նախատուէր և հերարձակ չ'է բողոքեր նաև դահլիճի ձեռքին ներքև, երբ ճշմարիտ կրօնքը զիմակ կրեր և ճշմարիտ հաւատքը համրութիւն պահէր է, երբ իրաւունքը զինքը ուրացէր և դատաւարտէր է, երբ անարատ աղգասիրութիւնը ազատութիւնը խեղդելով սարձեր ու գետտափոր զարաններու մէջ կայան ընտրէր է, երբ պատիւը աղղին ստակը ժողովեր և հաշիւ չտալով աներեւոյթ եղեր է, երբ ուղղամտութիւնը բաղձաթիւ ընտանիքներու խոստումներ ըրեր և պատանիներու միտքը խանգարէր և ետ դարձուցէր է : Գիտէք որ մարդկութեան մէջ շատ անիրաւութիւններ կը տեսնուին, բայց ճշմարտութիւնը երբեք չ'ընդունիր վատութեան ձեռքը իր պաշտելի ղէմքը զարդարելու համար. ինչո՞ւ ուրեմն ուրիշի բերնով կը պատասխանէք և կաշառակեր լեզուներու կը զիմէք մեր ընտանի կեանքը քննելու և մրելու համար : Այս կերպով, նաև եթէ իրաւունք ունենաք (և իրաւունքին ստուերը անգամ չ'ունիք) անարի և անսիրտ պիտի երեւիր հասարակութեան աչքին, իսկ զի ամենէն մաքուր ջուրը կուէն անցնելու ժամանակ կ'աղտոտի : Երեւան ելէք ուրեմն որ մենք և ժողովուրդը զձեզ տեսնենք անաբող և յարկու : Երեւան ելէք և անհպելի խորանի մը գոգը թող տուէք որ ձեր

բարոյականութիւնը հասկցաւ և ընդունաւ. եթէ ոչ ներկայ և սուղագայ սերունդի մէջ պիտի յիշուիք իբրև աշակերտք Թարթիսի, եթէ ոչ ձեր մութ էութիւնը պիտի դասուի Պաղիլինքով և գուցէ ես ներքև, եթէ ոչ մէկը չպիտի հատուց ձեր զրպարտութիւններուն ոչ հիմայ և ոչ առ յապա, եթէ ոչ հասարակութիւնը պիտի ըսէ մեզի հետ թէ՛ զրպարտելը պատասխանել չ'է : Երբեք պատմութիւնը չպիտի արձանագրէ որ « խայտառակութեան » ղէմ բողոքելը « խառնառակութիւն » է, և ասոր հեղինակ՝ Պ. Կ. Շահնազարեանը, և այս հեղինակին պաշտպան՝ Պ. Պետրոս Խորասանճեանը բարի և առաքինի մարդեր են : Երբեք Պ. Ոսկանեանը չպիտի դատաւարտուի իր ըրածին համար, իսկ զի աղղին պատիւը պաշտպանել և ճշմարտութեան ծառայել իր Հայու պարտաւորութիւնը և մարդու արժանաւորութիւնն էր : Այս արժանաւորութիւնը ունեցաւ և այս պարտաւորութիւնը կատարեց իր անձնական շահը մոռնալով : Հակառակը սնդոյնքը թող խօսին, եթէ կրնան. ապա թէ ոչ իրաւունք ունէր, ունի և պիտի ունենայ միշտ Մօլիէրին հետ կրկնել հրապարակաւ,

Aussi ne vois-je rien qui soit plus odieux
Que le dehors plâtré d'un zèle spécieux,
Que ces francs charlatans; que ces dévots de place
De qui la sacrilège et trompeuse grimace
Abuse impunément et se joue, à leur gré
De ce qu'ont les mortels de plus sain et sacré.
Ces gens qui, par une âme à l'intérêt soumise,
Font de dévotion métier et marchandise,
Et veulent acheter crédit et dignités
A prix de faux clins d'yeux et d'élans affectés;
Ces gens, dis-je, qu'on voit d'une ardeur non commune,
Par le chemin du ciel courir à leur fortune;
Qui, brûlants et priants, demandent chaque jour,
Et prêchent la retraite au milieu de la cour;
Qui savent ajuster leur zèle avec leurs vices,
Sont prompts, vindicatifs, sans foi, pleins d'artifices,
Et, pour perdre quelqu'un, couvrent insolemment
De l'intérêt du ciel leur fier ressentiment;
D'autant plus dangereux, dans leur âpre colère,
Qu'ils prennent contre nous des armes qu'on révère,
Et que leur passion, dont on sait bon gré,
Veut nous assassiner avec un fer sacré :
De ce faux caractère on en voit trop paraître.

Ս. Ռ.

(1) Մեր ընթերցողը կ'ազաչուին այս առիթըրը նշանակելու, որ մը կ'ըսենք ինչ պարագայի մէջ զրուեցան անոնք :

ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹԻՒՆԸ ՈՒՐԿԷ ԿՈՒԳԱՅ:

Արևմուտքը սկսելն էառ զրեթէ շարած մը չանցնիր ուր անհեթեթ խօսքերով և նախատինքնով լի նամակներ չ'ուղարկուին մեզ Պօլիսէն: Մինչև հիմա ստորագրութիւն մը չտեսանք հոն և հետևապէս աւելորդ սեպեցինք նշանակել զանոնք արհամարհելով զրոգնէրը և մանաւանդ զրէ տուողը որուն վատութեան կենդանի և պժգալի օրինակ մը ըլլալը փորձով և բնականօրէն ի վազուստանութի: Կ'երեւակայէինք թէ մեր անընթացութիւնը քիչ մը արխութիւն պիտի տար իրեն և իր սինըքոր ծառաներուն: Կ'ը խաբուէինք, անոնք Պարթեւի պէս, խուսելու ատեն նետ կը քաշեն մեր վրայ և անոնք ի ձեռն կուղեն անուանարկ մրտաէլ զմեզ: Իրենց արժանի դէնք մ'է այս և կրնան որչափ ուղեն, ինչպէս ուղեն և երբ ուղեն գործ անել զայն մեզի դէմ: Ըրածնիս այլ յայտնի է ընկերքնիս ալ, և վախ չունինք ամենեւին:

Քանի մը շաբաթ է ի վեր մանաւանդ անտանուն նումակները կատաղի գոյն մը կ'առնուն և հուր ու բոց կը տեղան մեր վրայ. զեռ երեկ չ'է միւս օր՝ չորսը մէկէն եկան Պօլիսէ և մեր ձեռքը ինկան փրփրալիլ:

Ի՞նչ է արդեօք մեր յանցանքը որ այսպիսի պատուոյ արժանի կ'ըլլանք տեսակ մը գոհնիկներու կողմէն: — Ատուղիս մէնք ալ չ'ենք զիտեր: Պարոն Գ. Այվազովսքի անուն կրօնաւորը, մեր առջի հրատարակութիւնը կործանելէն և մեզ վնաս տալէն ետև, սկսեալ էր զրքի մը մէջ, զմեզ թշնամանել և վատահամբաւել: Պատասխան տուինք հրապարակաւ, մեր պատիւը պաշտպանեցինք և իր ինչ աստիճանի մարդ ըլլալը կէս մը յայտնեցինք: Նրկզիմի կրօնաւորը մեր փաստերուն առջև լռեց և զեռ կը լռէ: Իրաւունք ունէինք մակաբերել անկէ որ վերջապէս իր յանցանքը կ'զգայ և թող տուինք զինքը որ ամօթով մնայ իր նկուն վիճակին մէջ: Բայց իր աներես բարեկամներու խումբը ունայէն չգաղթիր տակաւին և բերան խղաւով կ'ուզէ ժողովուրդին համոզել որ յանցանքը մեր կողմն է: Ունայն կազկանձիւն:

Կոնստանտինոպոլիսի Պարոն Յակոբը, իր չափը մոռնալով, մեզ կեղծաւոր նամակ մը գրեալ և անուղղակի կերպով վերոյիշեալ հրատարակութեան կործանելու առիթ եղեր էր: Իր նամակը հրապարակաւ հերքեցինք և երկդիմի բարեկամութիւնը մերժելով ցոյց տուինք հոս ալ թէ ով է յանցաւորը: Պ. Յ. Կոնստանտինոպոլիսէն չվերաբերուած խնդիրներու խառնուելով և տեսակ մը կրօնաւորներ իր բոլորտիքը ժողովելով, իր մարդու և պաշտօնաւորի պարտքը կը մոռնար և մեզ անգարմանելի վնաս կը պատճառէր: Բողոքեցինք հատարակութեան առջև և յանուն արդարութեան մեր իրաւունքը պաշտպանեցինք: Խրատաւորութիւնս զեռ կը լռէ և իր լռութեամբ մեր ըսածին իրաւունքը կուտայ բողոքովին:

Բայց իր պօլսեցի ծանօթները կը շարունակեն խորհուտալ և ռամիկը զրգուել մեզի դէմ: Ընդունայն զրգիւ: Պարոն Կոնստանտինոպոլիսէն բարեկամներուն տրուած չ'է մեր պատիւը արատել:

Ժամանակ անցաւ, Մաւիս անուն լրագիրը առանց առիթի, առանց բնութեան Արեւմտեայ նախառեց « խայտառակ » թերթ կոչելով զանիկա: Պատասխանեցինք համառօտիւ թէ « խայտառակ » բառը աւելի իրեն և իր տնօրէնին կը վերաբերի: Ծանօթ և նշանաւոր անձեր խնայուցին մեզ որ Մաւիսը Պ. Պետրոս Խորասանճեան անուն սեղանաւորի մը գործի է: Ականջ չգրինք այս տեսակ լուրերու որպէս զի անձնական վէճերը ոչ աւելի չթունաւորուին: Մինչ այս մինչ այն Իդմիրի Արշաղոյսը ծանօթութիւն մը կը հրատարակէ. « Պօլիս տպուած Մաւիս անուն խայտառակ թերթին » վրայ, որու մէջ Պ. Պետրոս Խորասանճեանին և Իւթիւնի անուն անպատիւ մարդու մը համամտութիւնը զրեթէ կը հաստատուի: Կ'ը պատասխանենք հանգարտօրէն որ մեզ « խայտառակ » ըսողը այսպիսի տխրոսի մը աւելի արժանի է ժամանակաւ « խայտառակութիւն » մը պաշտպանելուն համար:

Պ. Պետրոս Խորասանճեանը փոխանակ Մաւիսին հետ իր համամտութիւնը ուրանալու, և մեր ըսածը հերքելու տեղ, կ'սկսի ժամանակաւ իր մեզի զրածը ուրանալ և հոն, հոս անուշիկ կերպով ստել: Նւ որովհետեւ իր ծուռ բերանը չքաւեր մեր պատիւը անյարգելու համար, բարեկամներու նամակներով կը յանդգնի զմեզ նախատել հեռուէն: Ասկէ նուազ տմարդութիւն մը չէինք սպասեր իրեն պէս Ֆենեքիէ մը (1), բայց կը յուսայինք որ քիչ մը աւելի վարպետութիւն պիտի բանեցընէ և անպատուութեան ձեռն չպիտի կարկառէ իր սրտին նուաստ կիրքերը դուրս ծախելու համար: Ունայն յոյս: Իր թշնամութիւնը զէլզէկութեան դուռը ինկաւ հիմա, և իր բոլոր էութիւնը ամենուն յայտնեց ակներև:

Ի՞նչ կը մնայ մեզ ընելայս տեսակ ազգայիններու դէմ: Եթէ լռենք հայ Պաղիւլ պիտի ազադակէ լրբօրէն: Կ'ը տեսնանք ինչպէս կը պահուի և կը վախնայ: Եթէ խօսինք և անուր գայթակղութիւններ երեսան հանենք, նորէն պիտի բամբասուինք, իբրև յանցաւոր, ռամիկներու առջև որք սուտ կրօնաւորներու և խաբեքայ ազգայիններու ետեւէն կերթան միշտ, ամէն իրաւունք և արդարութիւն մոռնալով:

Սակայն անհնար է որ Իւթիւնի անուն մարդու մը պատասխանենք: Մեր պատիւը այս տատիկան չկրնար իշնել երբէք: Արեւմտեայ ուրիշ թերթի մը մէջ ըսինք, և հոս կրկնել կը փութանք. այս « խայտառակ » և անազգի մարդը կ'արհամարհենք իբրոր սրտէ: Կ'ը բռնա-

(1) Phanariote.

դատուինք ուրեմն մեր պատասխանը ճշմարիտ հեղինակին ուղղել, անոր էրեսին դիմակը փար առնուլ, ասպարէզ քաշել ղինքը բռնի և հասարակութեան ցոյց տալ թէ ով է « խայտառակ, » ինքը ԼԹէ Պարոն Ոսկանեանը :

Թող բարեմիտ հաստատակութիւնը համբերէ ուրեմն մեր միտ թերթին : Արեւմտահայ ԺՉ Թիւր շարագրուած էր, երբ իր սուտ ու պատիւը զրպարտութիւնները մեր ձեռքը հասան : Այսօր կը պատասխանենք, երկու խօսքով, նամակի մը որ Պօլիսէն կ'ուղարկուի մեզ և որ Պ. Պետրոս Խորասանեան սեղանատրի մը բարեկամներու մէկին գրիչէն կը թափի : Ի՞նչ պէզղեկութեան թափութիւր :

Ղրկուած նամակը ստորագրութիւն չ'ունի և առջի բառէն մինչև յետինը թշնամանքէ ուրիշ բան չ'ամբողջէր : « Նամակս չստորագրեցի, կըսէ այս պէզղեկ հայը, վասն զի մտածեցի որ անունս զնկելով խօսքիս աւելի ծանրութիւն չսկսի տամ : » Համոզուած է ուրեմն անիկա որ իր անունը ծանրութիւն մը չ'ունի և բռնաւ ամենեւին չկրնար կէտ մ'անգամ արժի : Այս թեթեւ տրամադրութիւնը Պ. Պետրոս Խորասանեան սեղանատրի մը կշիռին կ'ուղարկենք, և իր անանուն էութիւնը Աւետիք անունով կնքելով կը շարունակենք իր նախատինքը բնական :

Պարոն Աւետիքը կ'սկսի սնդիկ թէ լրագիր շինել չ'ենք գիտեր տակաւին : Կը հաւանինք ասոր և կը հրաւիրենք ղինքը որ Բարիկ գայ և մեզ գոտ առլու հաճի այս նիւթի վրայ :

Պարոն Աւետիքը կը հաստատէ նաեւ թէ մեր հանգիստը « ազգօգուտ բան մը չ'իրատարակեց » : Ասոր ալ կը հաւանինք, վասն զի գիտենք որ ազգիկ օգուտ մը շնորհելու համար Պ. Պետրոս Խորասանեանի նման մարդերը երկինք հանելու և Պ. Գ. Այվազովսիին նենգութիւնները գովելու է : Այս տաղանդը չունինք բնաւ և, կարծենք, չսկսի ունենանք երբէք մեր կեանքին մէջ :

Պարոն Աւետիքը կը գրէ եւ թէ մեր ըսածէն Պ. Պետրոս Խորասանեանին « հոգածափը անգամ չ'աղտոտիր » : Ասոր բոլորով սրտի կը հաւանինք, այս հոգածափը ճիշտ աղտոտելու հարկաւորութիւն չունի : Պօլսի շուկային կտուր ուղարկի մէջ էրեսին է և յիշեալ սեղանատրը նոն օրերով իր սուրբ սաքերը պաշտպանէր է :

Պարոն Աւետիքը այս պղտի թշնամանքէ ետեւ ձայնը կը բարձրացնէ և իր բերնին չափը կ'առայ մեզ այս կերպով. « Առանց ամչնալու կը ստէր ըսելով թէ՛ յիշեալ պատուաւոր անձը խայտառակի մը պաշտպան ըլլալէն զղջալով՝ իր զղջումը նամակով մը իմացուցեր է ձեզի » : Հոս կանգ կ'առնուինք և ալ հաւանութիւն չ'ենք կրնար տալ բնաւ Պարոն Աւետիքին զէզղեկութեան : Զգիտէր տակաւին այս ապուշ հայը որ Պ. Պետրոս

Խորասանեանը մեզ նամակ մը գրած ունի որու մէջ կը կարդանք զայն և ուղղղին կարգալ ու շօշափել կուտանք որ տեսնէ, հասկնայ և համոզուի : Ահա բուն իր խօսքերը զոր անսխալութիւն կը տառագրենք. « Մենք աստ վարդապետին վարուցը վրայօք մտերմական նամակներ տուած էինք և ասանկ ծանր պարագայի մէջ արժան եղած զգուշաւոր խոհեմութեամբ, բանը չձանձընելով (բանը տանիքներու վրայ կը քարոզուէր) կարգի դնելու տնօրէնութիւններ ըրած էինք զայնակցութեան պատճառը ասկէց վերցընելու համար (1) և հոս զգուշաւոր մեր բարեկամներուն ալ գրեր, աղաչեր էինք որ աշխատին հնար եղածին չափ ծածկելու եղած անցքերը (ԼԹէ երբէք այսպիսի անցքերու հոսը կրնայ ջնջուիլ ծածկողի ներքեւ) մինչև որ մենք ասկէց պէտք եղածը ի գործ դնելով՝ ձեր ՕՐԻՆՍՈՐ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ լեցընենք և զայնակցութիւնը խաղառ սպուռ վերնայ առանց անոր սահմանը տակի ընդարձակելու : »

Այսպէս ուրեմն Պ. Պետրոս Խորասանեանը ոչ միայն մեր բողոքը կը հաստատէ, ոչ միայն զայնակցութեան կը հաւանի, այլ և կը խոստանայ մեր « ՕՐԻՆՍՈՐ ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆԸ » լեցընելու :

Պարոն Աւետիքին խալ տկանքը այս ամենը չլսէր, կոյր աչերը յայտնութիւն մը չ'էն տեսներ և իր ապակահակիր սիրտը կը նեղանայ մեր յօգուածը կարգալով, բայց հառարակութիւնը արգէն իմացաւ թէ մեզի « խայտառակ » ըսողք ինչ աղբիւ վրայ կը տապալուի :

Պարոն Աւետիքը իր նամակը աւարտելէն առաջ և իր անգլխալ զէզղեկութեան վերջին փաստ մը տալու համար, նախատինքը կը շարունակէ այսպէս. « Յիրաւի բառական տմուր սիրտ մը ունենալու է ասանկ սուտ մը խօսելու համար, բայց մի կարծէք թէ ձեզի հաւատացող կը գտնէք. յիշեալ ամիրայն (յնւն) արհամարհանօք ուրացաւ և կուրանայ ձեր ըսածը և այսքանը բառական է ձեր սուտը յայտնելու և ինչ զրպարտիչ ըլլալիդ ամենուն իմացընելու : »

Ո՛չ, Պարոն Աւետիք, այսքանը բառական չ'է մեր ունէր յայտնելու համար, ոչ այսքանը բառական չ'է մեր զրպարտիչ ըլլալը ամենուն իմացընելու, բայց այսքանը կրնի շատ է յիշեալ ամիրայնին ինչ փաստ մարդ ըլլալը յայտնելու, կատարելապէս յայտնելու մեր սոցիալ. Պ. Պետրոս Խորասանեանը այնչափ սուրբ մարդ մը չ'է որ իր բերնէն ճշմարտութիւն հոսի միշտ, և որուն խօսքը իր ստորագրութեան արժէքը ունենայ : Այս ստորագրութիւնը մեր քովն է, իր նամակին ներքեւ կը գտնուի, իր փափակ մատերովը զրոշմուած է հոն և իր ուրանալը նոր « խայտառակութիւն » մը ետ կը յայտնէ և ոչ ուրիշ բան :

(1) Անտարակցա Բարիկէն հանելով Պօլսի իր տանը տանելու համար :

ՄԱՆՈՆ ԼԷՍԲՕ.

(Շարունակություն, Տես քիւ. 8, էջ 57. 66.)

Ես երբ անոր սիրովը բոլորովին զբաղած կը մնայի, քանի մը մարդերու ոտքի ձայնը լսեցի որք սանդղակէն վեր կենէին : Մեղմով դուռը դարկին. Մանօն եկաւ զիս պագաւ և ձեռքուն մէջէն սպրդելով իր սենեակին մէջ մտաւ մէկէն ու փակուեցաւ հոն : Երեսակայեցի թէ՛ շտկուած չ'ըլլեմ համար կ'ուզէր օտար այցելուներուն չ'երեւիլ այսպէս : Ես զացի դուռը բանալու :

Հապիւ թէ կէս մը բացեր էի դայն հրը չորս հոգի վրաս ինկան և ճանչցայ որ չորսն ալ հօրս սպասաւորներ էին : Հետո բռնութեամբ չվարուեցան, բայց երկուքը ձեռքէս բռնելով, երրորդը սկսաւ զրպանս խառնել՝ ուր գտաւ պղտի դանակ մը որ վրայիս մինակ գէնքն էր : Ներսէս խնդրեցին իզմէ որ կը հարկադրուին պատիւիս պաշտելու և ըսին պարզօրէն թէ՛ հօրս հրամանով այսպէս կ'ըմբարտանջուի և թէ՛ մեծ եղբայրս ինծի կ'սպասէր վարը կառքին մէջ : Այնքան վրդոված էի որ զառնուիի պէս տալիս տարին զիս. ես ոչ ընդդիմութիւն ըրի և ոչ բառ մը ըսի : Ստուգիւ եղբայրս ինձ կ'սպասէր վարը : Կառքին մէջ անոր քովը պիտի գիտէի, և կ'առաջարկէի, որուն հրամանին հետ զանդուելով, արշաւակի մինչև Սէն Տընի տարաւ գիւղ : Եղբայրս սրտազին պագաւ զիս, բայց բառ մը չ'ըսաւ. անանկ որ ամէն հանգստութիւն ունեցայ ամէնօրեայի ու ծռուաւորութեամբ վրայ մտածել :

Նախ այնչափ մոտութիւն կը տեսնէի, որ զլուստ ինչ քարի զարմեղ չ'էի գիտեր. կողայի որ անգուծ մատնութիւն մը կար հոն, բայց չէի ըմբռնէր թէ՛ որո՞ւ կողմէ : Առաջ Թիւրքթը միտքս ինկաւ : Այ մատնիչ, կ'ըսէի, եթէ կոտորած իրօք կատարուի, պիտի տեսնէս թէ ինչ ձուն պիտի բերեմ զլիսուղ, պիտի տեսնես որ քու բանդ ալ բռնած է : Սակայն խորհելով գտայ որ անիկա չէր գիտեր բնակարանս ուր ըլլի, և հետեւապէս իրմէ չիմացան իմ տեղս : Սիրտս մեղք կը սեպէր Մանօնը ամբաստանել. այն կարգէ զօրս տրտմութիւնը որով պինդը ճնշուած տեսայ, իր արցունքը, քնքուշ համբոյրը որ տուաւ սենեակը խուսելու տեսնելու, արդարեւ ինձ անմեկնելի կ'երեւէին. բայց ես զանոնք կ'ըմբռնէի իբրեւնախաղցայութիւն մը մեր երկուքին զփրակաւորութեան, և երբ ես կը յուսահատէի այն գէպքին վրայ որ զիս անորմէ կը խլէր, զիւրաճաւանութիւն ունէի և կ'երեսակայէի որ անիկա իզմէ տակի գոռութեան արժանի էր :

Մտածումիս հետեւանքը եղաւ զիս համոզել թէ՛ Բարիդի գոհնէրու մէջ ծանօթ մարդերէ տեսնուել էի և թէ՛ անոնք հօրս ազգ ըրեր էին : Այս կարծիքը միտքս բռնութիւն տուաւ ինձ. կը յուսայի անկէ ազատիլ քիչ մը

յանդիմանութիւն և քանի մը պատիժ կրէին ետե հայրական իշխանութիւնէն : Միայն զորի զանոնք կ'լլէի համբերութեամբ և խօսք տալ որ՝ ուղածնին ընելու պատրաստ եմ, որպէս զի աւելի զիւրութիւն ունենամ ճամբայ մը գտնել Բարիդ գտնալու և Մանօնը նորէն գտնելով անոր կեանք և տրախտութիւն տալու համար :

Քիչ ատենէն ետք Սէն Տընի հասանք : Եղբայրս կը զարմանար որ լուս կը կենամ և կ'երեսակայէր թէ այս բռնութիւնը վախէն կը ծագի : Սկսաւ զիս մխիթարել հաստատելով որ հօրմէս խառնութիւն չ'ախտի ընդունիմ եթէ յանձն առնում անուշութեամբ պարտքս ճանչնալ և այս կերպով արժանանալ սիրոյ որ ունէր վրաս : Ուղեց որ զիշերը Սէն Տընի անցնէմ և զգուշութեամբ երեք սպասաւորներու հրամայեց սենեակիս մէջ սլաակելու :

Սիրտս զէջ եղաւ տեսնելով որ հիւրատունը, ուր մենք իջանք, մի և նոյն էր, և ես Մանօնին հետ Ամիէնէն Բարիդ երթալու տեսնելու հոն գաղթել էի : Հիւրապետը և ծառայք զիս ճանչցան և մէկէ ի մէկ գոշակեցին եղբուքեան ստուգութիւնը : Ականջովս լսեցի որ հիւրապետը կ'ըսէր. Հոն, հոն, այս պարտնիկը ան է որ մեց ջարած առաջ ասկէ կ'անցնէր նորաբոյս օրիորդի մը ընկերութեամբ որու վրայ կը խեղար : Ինչ գեղամի օրիորդ էր ան : Դժբաղդ դաւաններ, ո՞ն ինչ պէս զիրար կը զրգուէին, կը սիրէին : Մեղք, աստուած վիպ մեղք որ բաժնեցին զանոնք իրարմէ : Այս խօսքերը չլսելու զարկի և որբան կարելի էր կը պահուէի որ մարդէ մը չտեսնուիմ :

Եղբայրս Սէն Տընի մէջ երկու հոգոյս համար կառք մ'ունէր, ուր նստանք աստուծոյ կամօխ և հետեւեալ իրիկուն մեր ատնը հասանք : Իզմէ առաջ հայրս տեսաւ որպէս զի սիրտը տանէ պատմելով հեղուծիւնս որով վարտեցայ բռնութեան մինչև այն ժամը : Այս կերպով գտած ընդունելութիւնս այնքան խիստ չ'էր որչափ ես կ'սպասէի : Հայրս գոհ եղաւ քանի մը անորոշ յանդիմանութիւն ընելով առանց հրամանի տունէն հեռանալուս համար : Ետք խօսքը Մանօնին վրայ բերելով ըսաւ թէ՛ ինձ արժանի պատիժ առի անձանք օրիորդի մը զիրիկը նետուելովս, և թէ՛ իմ խոհեմութեան վրայ տակի մեծ վստահութիւն ունէր ու չէր յուսար որ այսպէս պիտի վարուիմ. սակայն կը յուսար որ այս գէպքը զիս տակի զգաստ պիտի ընէր ուրիշ անգամ : Իր խօսքը ես այն միտքով առի որ կը համաձայնէր խորհուրդներուս հետ : Ծնորհակալ եղայ իր բարութիւնէն և ներումէն, ու խօսք տուի տակի հիւս և կանոնաւոր վարք մ'ունենալ այնուհետեւ : Սիրտիս ներսէն յաղթութիւն կ'զգայի, վստահ զի զործերուն այս զարժուածովը զրեթէ հաւասարի էի որ ազատութիւն պիտի ունենամ տունէն խուսելու նսն գիշերը լուսնիլէն առաջ :

Բնութիւնս համար սեղան նստանք. հեղուծիւնը սկը-

սաւ վրաս տեղալ Ամիէնի մէջ ըրած որսիս՝ և հաւա-
տարիս տիրութիւն հետ փախուստիս համար : Ամե-
նին հոն չ'եղայ և անոնց ըսածները խնդալով կ'լլեցի-
մանաւանդ թէ ուրախ էի որ խօսակցութիւնը աւիթ
կուտար ինծի այն նիւթի վրայ խորհիլ որով միաբն
դբաղուած էր անդով : Սակայն հօրս բերնէ քանի մը
խօսք ելնելով ունկնդրութիւնս բոլորովին հոն գնաց :
Պ. տը Պ...ին մատնութիւնը և շահասէր ծառայութիւնը
յիշեց անիկա : Երբ էս այս անունը անոր բերնէն լսեցի,
փառ կտրեցայ և աղաչեցի խոնարհաբար որ աւելի
մեկնութեամբ յայտնէ իր ըսածը : Դէպ ի եղբօրս կող-
մը դարձաւ անոր հարցնելու համար թէ ինծի չ'էր
պատմած եղբւրսին : Եղբայրս պատասխանեց թէ
այնքան համոզարտ կը կենայի ճամբուն վրայ որ իրեն
անօգուտ երեւցաւ այս դեղը իմ խենթութիւնս բուժե-
լու համար : Նշմարեցի որ հայրս կը տատամսէր մեկ-
նութիւն տալու և բանը խփալէս յայտնելու : այնքան
ուժգին աղաչեցի որ կամքս կատարեց, կամ աւելի շի-
տակ ըսեմ հոգիս հանեց անգթութեամբ, ամենէն սոս-
կալի պատմութիւն մը ընելով :

Հարցուց նախ, եթէ միամտութեամբ հատապէր էի
որ տիրութիւնս սիրուած էմ : Համարձակ պատասխան
տուի որ այս կողմէն հաւատարմ էի և բանմը չ'էր կրնար
պզտի կասկած մը տալ ինծի : Հն հն հն կրկնեց հայրս
իր բոլոր ուժովը. յիշաւի դրօսալի կատակ մ'է այս :
Գիտես արդեօք ինչ սիրուն դոն էս և մըջտի ինձ դու-
արծութիւն կուտաս այսպիսի զգայութիւններ ունենա-
լով : Խեղճ սապէտ, միտոս որ Մարտիի ուխտին
զինուոր ըլլաւ կը պատրաստուիս, սրովհետեւ այսքան
միտում ունիս համբերող և խելօք այր մը ըլլելու : Այս
կերպ հաղար և մէկ ծաղրելի խօսքեր ըսաւ անիկա
սաղշութեան և զխրահուանութեան վրայ որովք զիս
շաղկուած կը սեպէր :

Վերջապէս տեսնելով, որ լուս կը մնամ շարունա-
կեց ինձ ըսելով թէ՛ ժամանակը լաւ մը հաշտելէն ետքը,
կրնար հաստատել որ Մանօն գրեթէ տասներկու օր
միտայն վրաս սէր ունեցեր էր Ամիէնէն հեռանալէս
ի վեր. վասն զի, վրայ բերաւ անիկա, զիտեմ որ ան-
ցեալ ամիսի 28ին դոն մեկնեցար Ամիէն քաղքէն.
այսօր ներկայ ամիսին 29է. տասնմէկ օր կայ որ Պ.
տը Պ... համակ գրեց ինծի. կ'ենդադրեմ թէ ուժ օր
հարկատու եղան իրեն՝ Մանօնին սիրտը զրաւելու հա-
մար : Այսպէս եթէ 11 և 8 հանելու ըլի մէկը ամիսի
մը 28 էն մինչև միւս ամիսին 29ը, այսինքն 51 օրէն,
կը մնայ 12, աւելին կամ պակասը չ'եղ կը թողում :
Այս խօսքերը լսելով՝ անզանակիցները սկսան քահ
խնդալ :

Ես ունկն կը գնէի այնպիսի սիրանդութեամբ որ կը
վախճայի թէ չ'պիտի կրնամ համբերել այս կատակին
մինչև վերջը : Գիտցիր ուրեմն շարունակեց հայրս,

որովհետեւ զեռ բանէ մը լուր չ'ունիս, թէ Պ. տը Պ...
տիրութիւնի սիրտը շահած է և երբ կ'ուզէ ինծի համոզել
որ անշահասէր ծառայութիւն մը ընելու համար Մանօնը
ձեռքէդ յափշտակեր է, էս չեմ խաբարիր և հեղնութիւնը
կ'զգամ : Իրեն նման մարդէ մը, որուն անձնած էմ.
սպանելու է այսպիսի աղիւս զգայութիւնները. խելքդ
ինչ կը կտրէ : Անիկա Մանօնէն հասկցաւ որ դաւակն
էս, և, զքեզ զլիսէն ճամբելու համար, ինձ գրեց սէր
բնակիլդ և ինչ անկարգ ապրիլդ՝ աղղառնելով թէ հարկ
է բանութիւն գործածել քեզի դէմ : Յօժարակամ ինծի
բանակից եղաւ զքեզ բռնել տալու համար, և անս
անոր և Մանօնին առաջնորդութեամբ է որ եղբայրդ
կրցաւ մէկ բոսկի մէջ ձերբակալ ընել զքեզ :

Կարողութիւն չ'ունեցայ աւելի երկար ատեն լսել
այս խօսքը որուն ամէն մէկ բառերը սիրտս վիրաւո-
րեցին : Սեղանը թողի և դուրս ելնելու համար երկու
երեք քայլ ընելէն ետք, յատակին վրայ ինկայ և զգայու-
թիւն ու միաբն կորուսի : Շուտով օգնութեան հասն
և սկսայ ուշաբրիլ : Բայտեցան աչքերս արտառքի
հեղեղ մը թափելու և բերանս ամենէն սրտազին գոն-
գառներ ընելու համար : Հայրս, որ զիս միշտ սիրեց
էր կաթողին, իր բոլոր սիրով աշխատեցաւ զիս միւթա-
րելու : Իր ըսածը կը լսէի բայց չ'էի խմանար. ոտքը ին-
կայ և աղաչեցի ձեռնամամ, որ Բարիդ գոռնայու հրա-
ման տայ որպէս զի կարենամ Պ. տը Պ... զաշոյնով
մը սպաննել : Ա՛հ, ոչ, կ'ըսէի էս, Մանօնին սիրտը
չ'շահեցաւ անիկա. բռնութիւն գործածեց. մոզելով կամ
թիւնաւորելով անոր սիրտը զրաւեց, կամ գուցէ անաս-
նաբար վրան յարձակեցաւ : Մանօնը իս կը սիրէ,
տարակուսիլ չեմ կրնար և պէտք է որ անիկա զաշոյնը
ձեռքը սպառնացուած ըլի այս կերպ զիս ձգելու համար
Մանօնին պէս հոյակապ սիրունի մը իղմէ յափշտակե-
լու համար, ասկէ աւելին պիտի ընեմ անիկա. ահ
Աստուած կարելի է արդեօք որ Մանօն զիս մատնէ և
զիս սիրելէն դադրի :

Համարատու Տրէշոր.

Ի ԲԱՐԵՉ. ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 44.